



QueensCare
HEALTH CENTERS

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՅՍ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԵՋ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾԿԵԼ ԵՎ ԲԱՑԱՅԱՅՏԿԵԼ ՁԵՐ ՄԱՍԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ԴՈՒՔ ՀԱՍՈՒ ԴԱՌՆԱԼ ԱՅԴ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ:

QueensCare Health Centers-ը (QHC) հասկանում է, որ Ձեր և Ձեր առողջության վերաբերյալ բժշկական տեղեկություններն անձնական են: QHC-ն պարտավորվում է պաշտպանել ձեր բժշկական տեղեկությունները: Մենք ստեղծում ենք QHC-ում Ձեր ստացած ինսամբի և ծառայությունների գրանցում: Այս գրանցումը մեզ անհրաժեշտ է Ձեզ որակյալ ինսամբ տրամադրելու և որոշակի իրավական պահանջներին համապատասխանելու համար: Այս ծանուցումը վերաբերում է QHC-ի կողմից ստեղծված բժշկական տեղեկություններին: Ձեր անձնական բժիշկը կարող է ունենալ տարբեր քաղաքականություն կամ ծանուցումներ՝ բժշկի գրասենյակում կամ առողջության կենտրոնում ստեղծված բժշկական տեղեկությունների օգտագործման և բացահայտման հետ կապված: Այս ծանուցումը Ձեզ կպատմի այն եղանակների մասին, որոնցով մենք կարող ենք օգտագործել և բացահայտել Ձեր մասին բժշկական տեղեկությունները: Մենք նաև նկարագրում ենք Ձեր իրավունքները, ինչպես նաև մեր ունեցած որոշակի պարտավորություններ՝ կապված Ձեր բժշկական տեղեկությունների օգտագործման և բացահայտման հետ: Օրենքով մեզին պահանջվում է. (1) Համոզվել, որ Ձեր ինքնությունը հաստատող բժշկական տեղեկությունները գաղտնի պահվեն (որոշ բացառություններով), (2) Ձեզ ծանուցել Ձեր բժշկական տեղեկություններին առնչվող մեր իրավական պարտականությունների և գաղտնիության գործելակերպեր մասին, և (3) Հետևել ներկայումս ուժի մեջ գտնվող ծանուցման պայմաններին: Մենք ունենք պարտականություն՝ Ձեզ տեղեկացնելու այն դեպքերում, երբ Ձեր բժշկական տեղեկությունները խախտվում են:

ԻՆՉՊԵՍ QHC-Ն ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԵՎ ԲԱՑԱՅԱՅՏԵԼ ՁԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Հետևյալ կատեգորիաները նկարագրում են այն տարբեր ճևերը, որոնցով մենք օգտագործում և բացահայտում ենք բժշկական տեղեկություններ: Մենք կբացատրենք, թե ինչ է նշանակում կատեգորիաներից յուրաքանչյուրը, և կփորձենք բերել որոշ օրինակներ: Ամեն կատեգորիայի շրջանակում կթվարկվեն ոչ բոլոր օգտագործումները կամ բացահայտումները: Այնուամենայնիվ, տեղեկությունների օգտագործման և բացահայտման մեզ թույլատրված բոլոր եղանակները կներառվեն կատեգորիաներից մեկի մեջ:

Բուժում: Մենք կարող ենք օգտագործել Ձեր մասին բժշկական տեղեկությունները՝ Ձեզ բուժում կամ բժշկական ծառայություններ տրամադրելու համար: Մենք կարող ենք Ձեր մասին բժշկական տեղեկությունները հաղորդել բժիշկներին, բուժքույրերին, տեխնիկներին, բժշկական ուսումնական հաստատությունների ուսանողներին կամ QHC-ում աշխատող այլ անձանց, որոնց այդ տեղեկություններն անհրաժեշտ են Ձեր մասին հոգալու համար: Օրինակ, Ձեր կոտրված ոտքը բուժող բժշկին կարող է անհրաժեշտ լինել իմանալ, թե Դուք ունե՞ք արդյոք շաքարային դիաբետ, քանի որ շաքարային դիաբետը կարող է դանդաղեցնել ապաքինման գործընթացը: Մենք կարող ենք Ձեր մասին բժշկական տեղեկություններ հայտնել նաև QHC-ի աշխատակից չհանդիսացող անձանց, ովքեր կարող են ներգրավված լինել Ձեր բուժման մեջ, օրինակ, անհրաժեշտ հմտությունների տիրապետող բուժքույրական հաստատություններին, տնային առողջապահական գործակալություններին և այլ բժիշկների կամ բժշկական գործունեությամբ զբաղվողների: Օրինակ, մենք կարող ենք թույլ տալ, որ Ձեր բժշկական տեղեկությունները հասանելի լինեն մասնագետին՝ Ձեզ բուժելու գործում նրան օգնելու նպատակով:

Վճարման կարգը: Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել Ձեր մասին բժշկական տեղեկատվությունը, որպեսզի QHC-ում Ձեր ստացած բուժման և ծառայությունների համար հնարավոր լինի հաշիվ դուրս գրել, իսկ վճարը կգանձվի Ձեզնից, ապահովագրական ընկերությունից կամ երրորդ կողմից: Օրինակ, գուցե հարկ լինի Ձեր առողջապահական պլանին տեղեկություններ տրամադրել QHC-ում Ձեր ստացած բուժման վերաբերյալ, որպեսզի Ձեր առողջապահական պլանը վճարի մեզ կամ փոխհատուցի Ձեզ՝ բուժման համար: Մենք կարող ենք նաև Ձեր առողջապահական պլանին հայտնել բուժման մասին, որը Դուք պատրաստվում եք ստանալ, նախնական հավանություն ստանալու կամ որոշելու համար, թե Ձեր պլանը կներառի՞ արդյոք բուժումը:

Առողջապահական գործողություններ: Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել Ձեր մասին բժշկական տեղեկությունները առողջապահական գործողությունների համար: Նման օգտագործումները և բացահայտումներն անհրաժեշտ են QHC-ի ծրագրերը վարելու համար, ինչպես նաև ապահովելու, որ մեր բոլոր մասնակիցներն ստանան որակյալ ինսամբ: Օրինակ, մենք կարող ենք օգտագործել բժշկական տեղեկություններ՝ մեր կողմից իրականացվող բուժումն ու ծառայությունները վերանայելու և Ձեր ինսամբի հարցում մեր անձնակազմի կատարողականը գնահատելու համար: Մենք կարող ենք նաև տեղեկություններ հայտնել բժիշկներին, բուժքույրերին, տեխնիկներին, բժշկական և այլ ուսումնական հաստատությունների ուսանողներին և առողջապահական համակարգի այլ անձնակազմին՝ ուսումնասիրության և ուսուցողական նպատակներով:

QHC-ն մաս է կազմում կազմակերպված առողջապահական նախաձեռնության և ներառում է OCHIN- ի մասնակիցներին: OCHIN-ի մասնակիցների ներկա ցուցակը հասանելի է www.ochin.org կայքում: Որպես QHC-ի բիզնես գործընկեր, OCHIN-ը տեղեկատվական տեխնոլոգիաներ և առնչվող ծառայություններ է մատակարարում QueensCare Health Centers-ին և OCHIN-ի այլ մասնակիցների: OCHIN-ը նաև իր մասնակիցների անունից մասնակցում է որակի գնահատման և կատարելագործման աշխատանքներին: Օրինակ, OCHIN-ը համակարգում է կլինիկական ուսումնասիրությունների գործողությունները մասնակից կազմակերպությունների անունից՝ լավագույն գործելակերպերի չափորոշիչներ հաստատելու և կլինիկական օգուտները գնահատելու համար, որոնք կարող են բխել առողջապահական էլեկտրոնային գրանցման համակարգերի օգտագործումից: OCHIN-ը նաև օգնում է մասնակիցներին աշխատել միմյանց հետ գործակցելով՝ բարելավելու հիվանդների ներքին և արտաքին ուղեգրման կառավարումը: QHC-ն կարող է Ձեր անձնական առողջության մասին տեղեկությունները փոխանցել OCHIN-ի այլ մասնակիցների կամ առողջական տեղեկությունների փոխանակման ծրագրի միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է բուժման կամ կազմակերպված առողջապահական նախաձեռնության իրականացրած առողջապահական գործողությունների նպատակների համար:

Առողջապահական գործողությունները կարող են, ի թիվս այլոց, ներառել Ձեր բնակության վայրի գեոկոդավորում՝ Ձեր ստացած կլինիկական օգուտները բարելավելու համար: Առողջության վերաբերյալ անձնական տեղեկությունները կարող են ներառել անցյալ, ներկա և ապագա բժշկական տեղեկություններ, ինչպես նաև «Գաղտնիության կանոններ»-ում նշված տեղեկություններ: Տեղեկությունները, որքանով որ կբացահայտվեն, կբացահայտվեն համաձայն «Գաղտնիության կանոններ»-ի կամ ժամանակ առ ժամանակ փոփոխվող ցանկացած այլ կիրառելի օրենքի: Դուք իրավունք ունեք փոխել Ձեր միտքը և հետ վերցնել այս համաձայնությունը, սակայն տեղեկությունները կարող են արդեն տրամադրված լինել Ձեր թույլվությամբ: Այս համաձայնությունը կմնա ուժի մեջ մինչև Ձեր կողմից գրավոր կերպով չեղյալ հայտարարելը: Ձեր խնդրանքով Ձեզ կտրամադրվի այն սուբյեկտների ցուցակը, որոնց բացահայտվել են Ձեր տեղեկությունները:

Դրամահավաք գործունեություն: Մենք կարող ենք կապվել Ձեզ հետ՝ QHC-ի կողմից հովանավորվող գործունեության, այդ թվում՝ դրամահավաք ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու համար: Նման դեպքերում կօգտագործենք միայն ժողովրդագրական տեղեկություններ, ներառյալ անունը, հասցեն, կոնտակտային տվյալները, հեռախոսահամարը, տարիքը և սեռը, տեղեկություններ ծառայության ընդհանուր բաժնի, բուժող բժշկի վերաբերյալ, ինչպես նաև արդյունքները: Դուք կարող եք հրաժարվել Ձեր անձնական առողջության մասին տեղեկությունների

օգտագործումից կամ բացահայտումից՝ նշում կատարելով «Գաղտնիության գործելակերպերի ծանուցման ստացման աստատում» ձևի համապատասխան վանդակում:

Ընտանիքի անդամները և Ձեր նշանակած այլ անձինք: Ձեր հատուկ գրավոր հաստատմամբ մենք կարող ենք Ձեր բժշկական տեղեկությունները հայտնել նշանակված ընտանիքի անդամներին, ընկերների և այլոց, ովքեր ներգրավված են Ձեր խնամքի կամ Ձեր խնամքի դիմաց վճարման մեջ՝ հեշտացնելու այդ անձի ներգրավվածությունը Ձեր խնամքի կամ Ձեր խնամքի դիմաց վճարելու գործում: Եթե դուք անհասանելի եք, անգործունակ կամ գտնվում եք անհետաձգելի բժշկական իրավիճակում, և մենք որոշենք, որ սահմանափակ բացահայտումը կարող է բխել Ձեր առավելագույն շահերից, կարող ենք առանց Ձեր հավանության նման անձանց տրամադրել սահմանափակ բժշկական տեղեկատվություն: Մենք կարող ենք նաև հայտնել սահմանափակ բժշկական տեղեկատվություն որևէ պետական կամ մասնավոր սուբյեկտի, որն իրավասու է օժանդակել աղետից տուժածներին օգնելու ջանքերին, որպեսզի այդ կազմակերպությունը գտնի ընտանիքի անդամին կամ այլ անձանց, ովքեր կարող են ինչ-որ կերպ ներգրավված լինել Ձեր խնամքի գործում:

Ջեռագոտություն: Որոշակի պայմաններում մենք կարող ենք օգտագործել և բացահայտել Ձեր մասին բժշկական տեղեկությունները հետազոտական նպատակների համար (օրինակ, հետազոտական նախագիծը կարող է ներառել մեկ դեղամիջոց ստացած հիվանդների առողջության և ապաքինման համեմատությունը նույն բժշկական վիճակի համար մեկ այլ դեղամիջոց ստացածների հետ): Բոլոր հետազոտական նախագծերը ենթակա են հատուկ հաստատման գործընթացի, որը գնահատում է առաջարկվող հետազոտական նախագիծը և տվյալ նախագծի կողմից բժշկական տեղեկությունների օգտագործումը՝ փորձելով հետազոտության կարիքները հավասարակշռել հիվանդների՝ իրենց բժշկական տեղեկատվության գաղտնիության պահպանման անհրաժեշտության հետ: Մենք կարող ենք Ձեր մասին բժշկական տեղեկություններ հայտնել այն մարդկանց, ովքեր պատրաստվում են իրականացնել հետազոտական նախագիծ, օրինակ, օգնելու նրանց փնտրել բժշկական որոշակի կարիքներ ունեցող հիվանդների՝ պայմանով, որ նրան կողմից ուսումնասիրվող բժշկական տեղեկությունները դուրս չգան մեր կայքից:

ԱՅԼ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ: Օրենքով մեզ թույլատրվում է կամ մեզնից պահանջվում է իրականացնել ձեր բժշկական տեղեկությունների որոշակի այլ օգտագործումներ և բացահայտումներ՝ առանց ձեր համաձայնության կամ թույլտվության: Մենք կարող ենք Ձեր մասին բժշկական տեղեկություններ տրամադրել հետևյալ պատճառներով. 1) օրենքով պահանջվող ցանկացած նպատակ, 2) հանրային առողջապահական գործունեություն, ինչպիսիք են հիվանդության, վնասվածքի, ծննդյան և մահվան մասին անհրաժեշտ հաղորդումը, ինչպես նաև հանրային առողջապահական անհրաժեշտ քննություններ, 3) օրենքի պահանջով, եթե կասկածում ենք երեխայի կամ տարեցի նկատմամբ բռնություն կամ նրանց անտեսում, կամ եթե կարծում ենք, որ Դուք բռնության, անտեսման կամ ընտանեկան բռնության զոհ եք, 4) անհրաժեշտության դեպքում Պարենի և դեղորայքի վարչությանը՝ հաղորդելու դժբախտ դեպքեր, արտադրանքի թերություններ, կամ մասնակցելու արտադրանքի հետկանչին, 5) Ձեր գործատուին, երբ մենք Ձեզ առողջապահական ծառայություններ ենք տրամադրել Ձեր գործատուի խնդրանքով. բոլոր դեպքերում Դուք կստանաք ծանուցում, որ Ձեր գործատուին տեղեկություններ են հաղորդվել, 6) արտակարգ հանգամանքներում, եթե օրենքով պահանջվում է, իրավապահ մարմիններին, 7) եթե դա պահանջվում է դատարանի կողմից կամ վարչական ծանուցագրով կամ բացահայտման խնդրանքով. դեպքերի մեծ մասում դուք կստանաք ծանուցում նման բացահայտման վերաբերյալ, 8) օրենքի պահանջների համաձայն՝ դատաքննիչներին (coroners) և (կամ) թաղման բյուրոների աշխատակիցներին, ինչպես նաև ընտանիքի անդամին կամ ինքնությունը հաստատված մեկ այլ անձի, ով ներգրավված է եղել Ձեր խնամքի կամ առողջության համար վճարման գործում նախքան ձեր մահը, բացառությամբ այն դեպքերի, երբ Դուք QHC-ին հայտնում եք Ձեր հստակորեն արտահայտված հակառակ նախապատվությունը, 9) օրենքի պահանջով՝ ֆիզիկական բռնության լուրջ սպառնալիքի մասին ողջամիտ զոհ(եր)ին նախագգուշացնելու և պաշտպանելու նպատակով, (10) օրենքով պահանջվելու դեպքում Զալիֆորնիայի ճանապարհային տրանսպորտի վարչությանը, (11) Նախագահին պաշտպանական ծառայություններ մատուցելու համար լիազորված պաշտոնատար անձանց կամ կամ օրենքով լիազորված այլ անձանց, (12) եթե դուք

զինվորական եք՝ զինված ուժերի ծառայությունների պահանջով, կամ ազգային անվտանգության կամ հետախուզական գործունեության համար, (13) անհրաժեշտության դեպքում՝ աշխատողների փոխհատուցման գործակալություններին՝ Ձեր աշխատողի փոխհատուցման նպաստի չափը որոշելու համար: Վերջապես, մենք կարող ենք Ձեր բժշկական տեղեկությունները տրամադրել տարածաշրջանային և կենտրոնական (Նահանգային և Դաշնային կառավարությունների) Առողջապահական տեղեկությունների փոխանակումների ծրագրերին (HIEs) և առողջապահական ծառայություններ մատուցողների կողմից հովանավորվող նախաձեռնություններին, որոնք օգնում են առողջապահական ծառայություններ մատուցողներին փոխանակել տեղեկություններ և աշխատել միասին՝ հիվանդներին ավելի լավ խնամք և բուժում տրամադրելու նպատակով: Մենք Ձեր տեղեկությունները կտրամադրենք միայն բուժման նպատակներով, իսկ «անհատական առողջության վերաբերյալ զգայուն տեղեկությունները» կտրամադրենք միայն Ձեր ներկայիս առողջապահական ծառայություններ մատուցող հաստատություններին կամ ձեր բացահայտ թույլտվությամբ: Դուք կարող եք պահանջել, որ մենք Ձեր առողջության վերաբերյալ տեղեկությունները չտրամադրենք HIEs-ներին՝ գրելով QHC-ի գաղտնիության հարցերով պատասխանատուին: Մեզ արգելված է վաճառել ձեր անձնական առողջության մասին տեղեկությունները, բացառությամբ հետևյալ իրավիճակների. (1) հանրային առողջապահական նպատակների համար, (2) հետազոտության համար, եթե վճարումը սահմանափակվում է QHC-ի ծախսերով, (3) բուժման կամ վճարման համար, (4) QHC-ի վաճառքի կամ միաձուլման հետ կապված, (5) բիզնես գործընկերոջը կամ բիզնես գործընկերոջ կողմից, եթե QHC-ն պարզապես վճարում է բիզնես գործընկերոջ ծառայությունների համար, (6) եթե Դուք խնդրում եք մուտք գործել Ձեր իսկ անձնական առողջության մասին տեղեկություններ, (7) օրենքով պահանջված դեպքերում, կամ (8) Առողջության ապահովագրության տեղափոխելիության և հաշվետվողականության մասին օրենքով (HIPAA) թույլատրվող այլ դեպքերում, երբ վարձատրությունը ծածկում է միայն ծախսերը:

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՈՒՉՎՈՂ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ: Դուք ունեք հետևյալ իրավունքները այն բժշկական տեղեկությունների նկատմամբ, որոնք մենք պահպանում ենք Ձեր մասին:

Ձեր բժշկական տեղեկությունների հասանելիությունը: Դուք իրավունք ունեք պատճենելու և (կամ) ուսումնասիրելու բժշկական տեղեկությունների մեծ մասը, որը մենք պահում ենք ձեր անունից: Մուտքի բոլոր խնդրանքները պետք է կազմվեն գրավոր և ստորագրվեն Ձեր կամ Ձեր ներկայացուցչի կողմից: Եթե Դուք խնդրում եք տեղեկությունների պատճենը, ապա Ձեզնից կարող է գանձվել վճար՝ պատճենահանման, փոստով ուղարկելու կամ Ձեր խնդրանքի հետ կապված այլ կյուլթերի ծախսերի համար:

Փոփոխություններ ձեր բժշկական տեղեկությունների մեջ: Դուք իրավունք ունեք պահանջելու, որ մեր պահպանած բժշկական տեղեկությունները փոփոխվեն կամ ուղղվեն: Մենք պարտավոր չենք կատարել բոլոր պահանջվող փոփոխությունները, սակայն մանրակրկիտ ուշադրություն կդարձնենք յուրաքանչյուր խնդրանքի: Մեր կողմից քննարկվելու համար բոլոր փոփոխությունների խնդրանքները պետք է լինեն գրավոր, ստորագրվեն Ձեր կամ Ձեր ներկայացուցչի կողմից, և նշեն փոփոխության / ուղղման խնդրանքի պատճառները: Եթե Ձեր խնդրանքով կատարվել է փոփոխություն կամ ուղղում, մենք կարող ենք նաև ծանուցել այլ անձանց, ովքեր աշխատում են մեզ հետ և ունենան չուղղված գրանցման պատճեններ, եթե համարենք, որ նման ծանուցումն անհրաժեշտ է:

Ձեր բժշկական տեղեկությունների բացահայտումների վերաբերյալ հաշվետվություն: Դուք իրավունք ունեք ստանալու հաշվետվություն մեր կողմից 2003 թ. ապրիլի 14-ից հետո Ձեր բժշկական տեղեկությունների որոշակի բացահայտումների վերաբերյալ: Խնդրանքները պետք է կազմվեն գրավոր և ստորագրվեն Ձեր կամ Ձեր ներկայացուցչի կողմից: Առաջին հաշվետվությունը 12-ամսյա ժամկետում անվճար է. լրացուցիչ խնդրանքների համար մենք կարող ենք Ձեզնից գանձել տեղեկությունների տրամադրման ծախսերը:

Ձեր բժշկական տեղեկությունների օգտագործման և բացահայտման սահմանափակումները: Դուք իրավունք ունեք մեզնից պահանջելու սահմանափակում այն բժշկական տեղեկությունների

Նկատմամբ, որոնք մենք օգտագործում ենք կամ հայտնում ենք Ձեր մասին՝ բուժման, վճարման կամ առողջապահական գործողությունների համար: Խնդրանքում մեզ հայտնեք. (1) թե ինչ տեղեկություններ եք ցանկանում սահմանափակել, (2) ցանկանո՞ւմ եք արդյոք սահմանափակել մեր կողմից օգտագործումը, բացահայտումը, կամ երկուսն էլ, (3) ո՞ւմ նկատմամբ եք ցանկանում, որ կիրառվեն սահմանափակումները, օրինակ, միայն Ձեր և Ձեր ամուսնու (կնոջ): Մեզանից չի պահանջվում համաձայնել Ձեր խնդրանքին, բայց եթե համաձայնեք, ապա մեր համաձայնությունը պետք է լինի գրավոր: Մենք կբավարարենք Ձեր խնդրանքը, եթե տեղեկություններն անհրաժեշտ չեն Ձեզ անհետաձգելի բուժում տրամադրելու համար: Մենք պարտավոր ենք կատարել Ձեր պահանջը՝ սահմանափակել տեղեկությունների տրամադրումը Ձեր վճարողին / առողջապահական պլանին, եթե այցելության օրը ամբողջությամբ վճարեք ծառայության կամ առարկայի համար:

Գաղտնի հաղորդակցում պահանջելու իրավունք: Դուք իրավունք ունեք պահանջելու, որ բժշկական հարցերի շուրջ մենք Ձեզ հետ հաղորդակցվենք որոշակի ձևով կամ որոշակի վայրում: Օրինակ, կարող եք խնդրել, որ մենք Ձեզ հետ կապվենք միայն տանը կամ միայն փոստով: Դուք պետք է Ձեր պահանջը ներկայացնեք գրավոր, նշելով, թե ինչպես կամ որտեղ եք ցանկանում, որ Ձեզ հետ կապվեն: Մենք կբավարարենք բոլոր ողջամիտ պահանջները:

Սույն ծանուցման թղթային պատճենի իրավունք: Դուք ունեք այս Ծանուցման թղթային պատճենն ստանալու իրավունք: Դուք կարող եք ցանկացած ժամանակ մեզ խնդրել Ձեզ տրամադրել այս Ծանուցման պատճենը: Նույնիսկ եթե Դուք համաձայնվել եք այս Ծանուցումն ստանալ էլեկտրոնային եղանակով, միևնույն է, Դուք դարձյալ իրավունք ունեք ստանալու այս ծանուցման թղթային պատճենը: Պատճենները հասանելի են մեր առողջության կենտրոններում կամ www.QueensCareHealthCenters.org կայքում: **Բոլոր խնդրանքները պետք է ուղարկվեն Ձեր ծառայություններ մատուցող հաստատությանը, կամ գրավոր կերպով ուղարկվեն QueensCare Health Centers, 950 South Grand Ave., 2nd Floor South, Los Angeles, CA 90015 հասցեով:**

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՒՅՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԵՋ: Մենք մեզ իրավունք ենք վերապահում փոխել QHC-ի գաղտնիության գործելակերպերը և այս Ծանուցումը: Մենք մեզ իրավունք ենք վերապահում վերանայված կամ փոփոխված Ծանուցումն ուժի մեջ դնել Ձեր մասին մեր արդեն ունեցած, ինչպես նաև ապագայում ստացվող ցանկացած տեղեկությունների համար: Մենք ընթացիկ Ծանուցման պատճենը կտեղադրենք ամբողջ QHC-ում: Ծանուցումը կբովանդակի ուժի մեջ մտնելու ամսաթիվը առաջին եջի վերին աջ անկյունում: Բացի դրանից, Դուք կարող եք ցանկացած ժամանակ պահանջել ուժի մեջ գտնվող ներկա Ծանուցման պատճենը:

ԲՈՂՈՔՆԵՐ: Եթե կարծում եք, որ խախտվել են Ձեր գաղտնիության իրավունքները, կարող եք գրավոր բողոք ներկայացնել QHC-ին կամ Առողջապահության և մարդկային ծառայությունների վարչության (DHHS) քարտուղարին: QHC-ի ներկայացուցչին գրավոր բողոք ներկայացնելու համար գրեք. **QueensCare Health Centers, Attn: Privacy Officer, 950 South Grand Ave., 2nd Floor South, Los Angeles, CA 90015:** DHHS-ի քարտուղարին գրավոր բողոք ներկայացնելու համար դիմեք. Michael Leoz, Regional Manager, Office for Civil Rights, U.S. Department of Health & Human Services, 90 7th St., Suite 4-100, San Francisco, CA 94103, 415-437-8310, 415-437-8329 (Ֆաքս):